

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2013 թվականի հոկտեմբերի 30–ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. ՀՈՒՖ լուծարային շրջանի արդյունքների ամփոփում:
2. 2013 թվականի Հեռակա ուսուցման ֆակուլտետի ընդունելության արդյունքների ներկայացում:
3. 2014 թվականի ուսումնական տարում դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունների վերաբերյալ հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին – ՀՈՒՖ լուծարային շրջանի արդյունքների մասին / զեկուցող՝ Ա.Ե. Համբարձումյան/

Նշվեց, որ հեռակա ուսուցման ֆակուլտետի լուծարային շրջանն անցել է կանոնակարգի համաձայն:

Լսեցին – 2013 թվականի Հեռակա ուսուցման ֆակուլտետի ընդունելության արդյունքների մասին /զեկուցող՝ Ն. Ա. Կուտուզյան/:

Նշվեց, որ 2013թ. Հեռակա ուսուցման համակարգում բակալավրի որակավորման աստիճանով 11 մասնագիտությունների գծով բուհ դիմած 206 դիմորդից ընդունվել է 201-ը:

Լսեցին–2014 թվականի ուսումնական տարում դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունների վերաբերյալ հարցը /զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ/:

Որոշեցին – Մասնագիտությունների առանձնահատկություններից ելնելով՝ աշխատանքային ուսումնական պլանների փոփոխություններն արտացոլել դասախոսների ուսումնական բեռնվածքի մեջ և ներկայացնել հաստատման:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Վ. Դ. Խաչատրյան